Թեստային առաջադրանք

Հայաստանի Հանրապետությունում պետական մշակութային քաղաքականությունը կազմակերպվում է մշակույթի պահպանման, տարածման և զարգացման պետական ծրագրերով, որոնք որպես օրենք հաստատում է.

1. ՀՀ կառավարության ներկայացմամբ ՀՀ ազգային ժողովը,
2. ՀՀ կառավարությունը,
3. ՀՀ կառավրությունը՝ լիազորված պետական մարմնի ներկայացմամբ,
4. ՀՀ ազգային ժողովը:

Գործադիր մարմնի պաշտոնում նշանակված անձի լիազորությունները դադարեցվում են իրավասու մարմնի որոշմամբ, եթե.

1. լրացել է նրա 65 տարին,
2. լրացել է նրա 66 տարին,
3. լրացել է նրա 60 տարին,
4. լրացել է գործադիր մարմնի պաշտոն զբաղեցնելու առավելագույն տարիքը և լրացուցիչ մեկ տարին:

Պետական կազմակերպությունը.

1. շահույթ ստանալու նպատակ հետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող ոչ առևտրային կազմակերպություն է,
2. շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող, ոչ առևտրային կազմակերպություն է,
3. շահույթ ստանալու նպատակ հետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող առևտրային կազմակերպություն է,
4. շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող ոչ առևտրային կազմակերպություն է:

Աշխատողը կամ գործատուն իրավունք ունեն լուծելու ժամանակավոր աշխատանքային պայմանագիրը նախքան դրա գործողության ժամկետը լրանալը՝ այդ մասին ծանուցելով միմյանց.

1. առնվազն երեք օր առաջ,
2. առնվազն երեք օր առաջ գրավոր ձևով,
3. հինգ օր առաջ,
4. առնվազն հինգ օր առաջ գրավոր ձևով:

Նշվածներից ովքեր չեն կարող լինել կուսակցության անդամ՝

1. դատավորները և պետական կառավարման մարմինների ղեկավարները,
2. պետական կառավարման մարմինների ղեկավարները,
3. դատավորները,
4. մանկավարժական աշխատանք իրականացնող անձինք: